ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր., Կառավարական տուն 3

07 նոյեմբերի 2024թ. N 60-Ա

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի N 37-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, <<Քաղաքացիական ծառայության մասին>> օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ մասով, Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2018 թվականի հուլիսի 31-ի N 29-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 4-րդ, 7-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 27-րդ կետի 10-րդ ենթակետը և նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի 2024 թվականի նոյեմբերի 6-ի N 42/45.6/37902-2024 գրությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գլխավոր քարտուղարին փոխարինողի 2019 թվականի հոկտեմբերի 8-ի <<Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության գլխավոր քարտուղարի 2018 թվականի օգոստոսի 14-ի N 07-Լ, Հայաստանի Հանրապետության էներգետիկ, ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության գլխավոր քարտուղարի 2018 թվականի օգոստոսի 13-ի N

202-Ա/4 հրամանները մասնակի ուժը կորցրած ճանաչելու, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գլխավոր քարտուղարի լիազորություններն իրականացնողի և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գլխավոր քարտուղարին փոխարինողի մի շարք հրամաններ ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 37-Լ հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) <<(22) Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

ա. Բաժնի <<1. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության
տարածքային կառավարման վարչություն>>

կետը լրացնել նոր՝ 5-րդ ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

<<5. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տարածքային կառավարման վարչության տարածքային զարգացման պլանավորման բաժնի մասնագետ (ծածկագիր՝ 22-33.1-Մ6-4)>>:

բ. <<3. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության
վարչական վերահսկողության վարչություն>>

կետը լրացնել նոր՝ 5-րդ ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

5. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության վարչական վերահսկողության վարչության վարչական վերահսկողության իրականացման բաժնի մասնագետ (ծածկագիր՝ 22-33.3-Մ6-3)>> **ենթակետով**:

գ. <<18. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության
արտաքին կապերի վարչություն

կետը լրացնել նոր՝ 12.1-ին ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

12.1. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության արտաքին կապերի վարչության միջտարածաշրջանային համագործակցության և արարողակարգի բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 22-34.4-Մ2-6)>> **ենթակետով**:

դ. <<20. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության
անձնակազմի կառավարման բաժին>>

կետը լրացնել նոր՝ 4.2-րդ ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

4.2. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության անձնակազմի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 22-34.6-Մ2-5)>> ենթակետով:

2) (22) <<Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

ա. **Բաժնի** <<1. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության
տարածքային կառավարման վարչություն>>

կետից հանել

5. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տարածքային կառավարման վարչության տարածքային զարգացման պլանավորման բաժնի ավագ մասնագետ (ծածկագիր՝ 22-33.1-Մ3-2)>> ենթակետը:

բ.<<3. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության վարչական վերահսկողության վարչություն>>

կետից հանել

5. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության վարչական վերահսկողության վարչության վարչական վերահսկողության իրականացման բաժնի ավագ մասնագետ (ծածկագիր՝ 22-33.3-Մ4-2)>> ենթակետը:

գ.<<18.Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության արտաքին կապերի վարչություն

կետից հանել

15. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության արտաքին կապերի վարչության միջտարածաշրջանային համագործակցության և արարողակարգի բաժնի մասնագետ (ծածկագիր՝ 22-34.4-Մ6-3)>> **ենթակետը:**

դ.<<20. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության անձնակազմի կառավարման բաժին>>

կետից հանել

8. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության անձնակազմի կառավարման բաժնի մասնագետ (ծածկագիր՝ 22-34.6-Մ6-1)>> ենթակետը:

11/7/2024

X

ԱՐԹՈՒՐ ԵՐԻՑՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝
Ա. ԵՐԻՑՅԱՆ

Signed by: YERITSYAN ARTUR 1609770064

ք. Երևան